## Պատասխաններ
## հայոց լեզվի օլիմպիադայի մարզային փուլի հարցաշարերի

**10-րդ դասարան**

2. Հոմանիշները՝ **պարփակել**-*գոտևորել,* **մայրի**-*անտառ* **վեհ** - խրոխտ, սիգապանծ, **առտնին**-առօրեական, **ահեղագոչ**-որոտընդոստ, **խորխորատ**- վիհ, **ապստամբ** -ըմբոստ, **ուրույն**-յուրօրինակ, **անըստգյուտ**-շքեղաշուք, չնաշխարհիկ, չքնաղ, **անպարագիծ**-տիեզերածավալ, **անիրական**-մտացածին, **ճրագալույց**-մթնշաղ, **կնճռոտ**-խորշոմապատ, **սևեռել**-հառել, **հոգեբուխ**- սրտագին:

3. **երկնասլաց =** երկն(երկին) + ա + սլ(սուլ) + աց, **խորհրդանիշ** = խորհ + րդ(ուրդ) +ա+ նիշ, **յուրօրինակ=** յուր + օրին(օրէն) + ակ, **չնաշխարհիկ=** չն(չին կամ ոչինչ) + աշխարհ + իկ, **միջնադար=** միջ(մեջ) + ն(ին) + ա + դար , **շքեղակառույց =** շք(շուք) + եղ +ա + կառ + ույց, **տիեզերածավալ=** տի + եզեր + ա + ծավալ, **երևակայություն =** երև +ա+ կա(յ)+ ություն, **հրաշապատում** = հրաշ + ա+ պատում, **սրտագին** = սրտ(սիրտ) + ա + գին

4. **աչքերը փակ**- ա) Առանց նայելու-քննելու, բ) Առանց գիտակցելու, լավ չկշռադատելու,
գ) Անգիտակից, շրջապատի կյանքին անհաղորդ, դ)Կուրորեն,
ե) Մտովի պատկերացնելով, զ) Վարժ, մեքենայաբար, բնազդաբար

5. **մասին**- 1.կապ, 2. **մաս** գոյականի տրականը հոլովաձևը, **սրբեր**,- 1.**սուրբ** բառի հոգնակին, 2. **սրբել** բայի հոգնակի երրորդ դեմքի ըղձական ապառնին, **կարգում**- 1. **կարգ** գոյականի ներգոյական հոլովաձևը, 2. **կարգել** բայի անկատար ձևաբայը, **գամ**-1. գոյ. մեխ, 2. **գալ** բայի եզակի առաջին դեմքի ըղձական ապառնին: (1 միավոր)

**2023**

## Գնահատման չափանիշներ
## հայոց լեզվի մարզային օլիմպիադայի հարցաշարերի

**10-րդ դասարան**

1.Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,1 միավոր
2. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,2 միավոր
3. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,2 միավոր
4. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր
5. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,25 միավոր
6. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավոր

**Բոլոր առաջադրանքների ուղղագրական յուրաքանչյուր սխալի համար հանվում է 1 կետադրականի համար՝ 0,5 միավոր, քերականական, ոճական և տողադարձի սխալներից յուրաքանչյուրի համար՝ 0,25 միավոր:**